№ 22 Շաբաթ Փետրվարի 28 1887 Շաբաթ Փետրվարի 28 № 22

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑ **1887** ԹՒԻՆ.

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրօգրամայով։ Մենք կը ստանանք սովական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ միտք ունեն այդ տեսակ կտակները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարչական կարգադրութիւն. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաշարժ Ֆրանսիայում, Իտալիայում և Շվէյցարիայում. Նամակ Շվէյցարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տառերի հնչումն և գրութիւնը ռուսահայոց և տաճկահայոց մէջ.

ԻՆՉ ՄԻՏՔ ՈՒՆԵՆ ԱՅԴ ՏԵՍԱԿ ԿՏԱԿՆԵՐ

—

Հարիւր անգամ մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձրել մեռնող հայերի կողմից կատարվող կտակների տարօրինակ և աննպատակ ձևի վրա։ Հարուստ հայը երբ մեռնում է և բաւական նշանաւոր գումար է կտակում, նա երբէք չի կը-տակի ամբողջ գումարը մի որոշ հաստատութեանը, այլ իր ամբողջ գումարը մաս մաս, կտոր կտոր կտակում է հազար և մի հիմնարկութիւններին՝ մի հազար բուբլի այս ինչ եկեղեցուն, մի հինգ հարիւր բուբլի այս ինչ դպրոցին, մի հազար հինգ հարիւր բուբլի այս կամ այն բարեգործական ընկերութեանը և այլն։ Այսպիսով ամբողջ գումարը, որ միասին վերցրած շատ անգամ մի պատկառելի գումար է կազմում և մի որոշ հաստատութեանը կը-տակվելով կարող էր նշանաւոր օգուտ տալ յիշեալ հաստատութեան, գուցէ նոյն իսկ ոտքի կանգնեցնել նրան,—կտոր կտոր լինելով, բաժան բաժան, աննշան գումարներով կտակվելով քսան և հինգ այլ և այլ հաստատութիւններին, նրանցից ոչ մինին, ի հարկէ, զգալի օգուտ չէ տալիս, ոչ մինին շօշափելի օգնութիւն չէ հասցնում, և այդպիսով բաժան բաժան լինելով, ինչպէս ասում են՝ ջուր է կարվում։

Եւ զարմանալի է թէ ինչքան էլ բացատրես հայերին այդ ճըշմարտութիւնը՝ ոչինչ չէ օգնում....

Վախճանվում է մէկը և կտակում է մի պատկառելի գումար, բայց դարձեալ մի և նոյն հայկական ձևով,—ոչ թէ մի որոշ հաստատութեանը, այլ կտոր կտոր հարիւր և մի հիմնարկութիւններին՝ եկեղեցիներին, վանքերին, դպրոցներին, ընկերութիւններին։ Այդ գումարը մի որոշ հաստատութեանը կտակելով՝ կարելի էր նոյն հաստատութեանը մեծ օգուտ տալ, բայց նոյն գումարը կտոր կտոր անելով՝ հաստատութիւններից ոչ մինին ոչինչ օգուտ տալ չէ կարելի։

Այդպիսով մեր բոլոր հարուստների կը-տակները ջուր են կտրվում և չեն հասնում իրանց նպատակին։ Աւելացրէք սրա վրա և այն հանգամանքը, որ բաժան բաժան անելով մեծ գումարը և փոքր փոքր գումարներ հարիւր և մի հիմնարկութիւններին կտակելով, աւելի դժուար էլ է կտակարարին կօնտրօլ անել, վերահսկել այդ բոլոր մեր գումարների գործադրութեան վրա, պահանջել ամբողջ երկրի երեսին ցրված իւրաքանչիւր հիմնարկութիւնից, որ ստացել է մի հազար, մի հինգ հարիւր, կամ երկու հարիւր բուբլու գումարը՝ կանոնաւոր և ճիշդ հաշուետուութիւն։ Այն ինչ, եթէ նոյն եօթ հազար բուբլու գումարը կտակողի կամքով մի տեղ յանձնվէր, աւելի հեշտ կը լինէր որոշել գումարի գործադրութիւնը, աւելի էլ հեշտ կը լինէր կտակարարին վերահսկել գումարի գործադրութեան վրա և պահանջել տարուց տարի կտակը վայելող հաստատութեան կողմից կանոնաւոր և ճիշդ հաշուետուութիւն։

Բայց ինչով բացատրել հայ կտակողների կողմից այդ տարօրինակ, այդ զարմանալի սովորութիւնը այդ ձևով մանրացնել մի նշանաւոր գումար որ ամբողջ մնալով անհամեմատ աւելի օգուտ կարող էր բերել,—մենք կատարելապէս դժուարանում ենք։ Այդ սովորութիւնը կարելի է բացատրել միմիայն հայի փառասիրութեան զգացմունքով, որին նա զոհում է նոյն իսկ այս կամ այն հաստատութեան իրական օգուտը։ Հայը կտակներ անելով չէ մտածում իսկապէս ազգի օգտի մասին. եթէ նա անկեղծ կերպով այդ օգտի մասին մըտածում էր, կտակեր ամբողջ գումարը մի որոշ հաստատութեանը, որի գործունէութեան ու նպատակին ինքն աւելի է համակրում։ Բայց կտոր կտոր անելով նշանաւոր գումարը և ապարդիւն դարձնելով իր կտակած փողերի արժէքը, հայը միայն մի զգացմունքով է թելադրվում,—այն է փառասիրութեան զգացմունքով՝ որ իր անունը իր մահից յետոյ յիշվի ոչ թէ մի, այլ հարիւր տեղ....

Այսպիսով կտակողի անունը մի տեղ կը յիշվի, որպէս բարերարի անուն, մի հազար հինգ հարիւր բուբլու համար, միւս տեղ մի հազար բուբլու համար, այս ինչ դպրոցում մի ութ հարիւր բուբլու համար, այն ինչ վանքում մի երկու հազար բուբլու համար, այլ և այլ քաղաքներում և գիւղերում հինգ հարիւր, երկու հարիւր բուբլու համար և այլն....

Սրա օգուտը շատ չնչին է և հաւասար է զրոյի, բայց փառքը մեծ է։ Միշտ և ամեն տեղ հայը զոհում է իր ազգի իրական օգուտը, իր հասարակութեան իրական շահը՝ իր անձնական փառքին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք Թիֆլիսի նահանգապետի հետևեալ յայտարարութիւնը։

1886 թվի մայիսի 28-ին կայացաւ Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված կարգիքը՝ Տէրքի և Կուբանի շրջանի այլազգիները և Անդրկովկասի ազգաբնակութիւնը զինուորագրութեան ենթարկելու առիթով։

Ներկայումս ամեն տեղ, ինձ յանձնված նահանգի սահմաններում, կազմվում են ներկայ տարվայ կոչնագրեր (призывные списки) քրիստոնեայ ազգաբնակութեան համար։ Այդ կոչնագրերում պէտք է մոցնվեն նրանք, որոնց 20 տարին լրացել է 1887 թվի յունվարի 1-ին, այսինքն 1866 թվին ծնվածները։ Զինուորագրութեան կանոնը, ով որ կոչնագրի հասակին հասածներից մոցրված չի լինի կոչնագրում և չի յայտնի այդ բանի մասին մինչև նրա հասակակիցների վիճակ հանելու օրը,—այդպիսին ղրկվում է վիճակ հանելու իրաւունքից և ընտանեկան գրութեան վերաբերեալ բոլոր արտօնութիւններից և ծառայութեան մէջ է գրվում, եթէ ծառայութեան համար պէտքական կը լինի, իսկ եթէ ծառայութեան համար անպէտք կը լինի, սակայն, ոչ այն պատճառով, որ զիտմամբ անդամազուրկ է եղել,—ենթարկվում է պատժի, որ որոշված է 1885 թ. հրատարակված քրէական օրէնքների 507-դ յօդուածի հիման վրա։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ՀՆՉՈՒՄՆ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԵՒ ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՄԷՋ

Է.

«Հայոց արքունի տան, Ոսկեդարի թարգմանչաց և սոցա հետևորդ մատենագրաց» արտասանութիւնը, որը չարունակվում է ցայժմ ռուսահայերում, բոլորովին մարած չէ տաճկահայոց մէջ։ Նոյն իսկ սոցա կեդրոնը, Կոստանդնուպոլիսը, որը մենք ևս, հ. Ցիրոյեանի հետ, հեռի ենք «հայութեան ամբողջութենէն անջատեալ և զրեթէ անպիտան մի անդամ նկատելէ», պահած է մեղ նրա նշոյլները, որոնք դեռ ևս իրանց բոլոր ոյժով, և նախնական հանդամանքով պահպանվում են Կ. Պոլսոյ հայ հասարակութեան մի յայտնի դասակարգի մէջ։ Սակայն որոնք են դրա պահպանողները, ով է այդ դասակարգի անդամը։ —Դա Կ. Պոլսոյ այն զատն է, որ ուսումնարանի սեռը հաղիւ թէ տեսած լինի, որին ռամիկ, դեհիկ անունով կնքած են մեր գրագէտները և իրանց զաւեշտական թերթերում, որոնց մէջ առանձին յիշատակաց արժանի են «Միմոսը» և մանաւանդ «Մամուլը» անարգանք և ծաղր չէ մնում որ չը թափեն նրա գլխին, պատճառ, որ նա այդպիսի կոչտ և սխալ արտասանութիւն ունի։ Կ. Պոլսոյ հասարակ դասը, ռամիկը, որ իր ընտանեկան շրջանում մուտք չէ տուած թիւրքերէնին՝ ասում է ճիշտ ռուսահայոց արտասանութեամբ։ «Ջունը գուլխուա», «բանը բուրդ է», «ջուրը տարաւ գնաց», «աղղղար լան միակ դռնն դիտես»։ Եւ գրագէտները՝ ռամկի այդ անարատ արտասանութիւնը դրում են հետևեալ կերպով՝ «Ծունը կուվխուա, պանը պուրտ է, ճուրը տարաւ կնաց», և այլն, իրանց ներկայ ըմբռնման համեմատ։ Այդ մի և նոյն ռամկի որդին կամ աղջիկը՝ մտնելով ուսումնարան, դուրս է գալիս արդէն բոլորովին փոխված արտասանութեամբ. նա ամօթ է համարում չարունակել իր մայրենի տան հնչումները և քերականական սխալ է համարում նրանց, այդ հնչումները։ Թողնենք Կ. Պոլիսը և անցնենք հայաբնակ գաւառները։ Ամեն նահանգում զուք կը գտնէք պահպանված, փոքր ի շատէ, ռուսահայոց արտասանութիւնը։ Մեղ անձամբ ծանօթ տեղերից, Տրապիզոնի նահանգի գիւղական աղգաբնակութիւնը նոյնպէս անարատ է պահած մեծաւ մասամբ նախնական արտասանութիւնը։ Բայց, ինչպէս ասացինք, զոցա թիւը պակասում է, հետզհետէ, այն աստիճանիւ, որքան նրա թիւրքաց լեզուի աղդեցութեան տակ են մտնում և յաճախում տաճկահայոց դըպրոցները, որտեղ առհասարակ տիրում է միւս կերպ արտասանութիւնը և ծաղրվում է նրա հակառակը. անարդ և ռամկական համարվելով։ Ահա թէ ինչպէս է դոյացել այն մեծամասնութիւնը, որի վրա այնքան պիղծ է յենվում վեր. հ. Տիրոյեան։ Եւ ոչինչ տարակոյս չը կայ, որ մի քառորդ դար յետոյ, երբ Կ. Պոլսոյ և գաւառայ այդ ռամիկն էլ կը լուսաւորվի դըպրոցներում, այն ժամանակ ասելի էլ կը ստուարանայ այդ մեծամասնութիւնը և վեր. Մխիթարեանը աւելի համարձակ օրէն կարող կը լինեն պնդել թէ նրանց ներկայ արտասանութիւնը պատկանում է հայոց ազգի ահագին մեծամասնութեան, որ նոյնն ունի բուն նախնեաց...

Սակայն միայն ռամիկը չէ, որ պահպանած է «Թարգմանչաց և հետևորդ մատենագրաց» արտասանութիւնը։ Տաճկահայոց նոյն իսկ գրական լեզուն էլ տեղ տեղ մատնում է իրանց նախկին հնչումները։ Դոցանից կը բերենք մի քանի օրինակներ։

Մեր ին ձ բառը նոքա գրում են ին ծ։ Ինձ բառի մէջ Ձ տառը ժողովուրդն ուրեմն հնչում է եղել հին ժամանակ այնպէս, ինչպէս ներկայումս ռուսահայք են հնչում, որ այժմ իրանց նոր տառադրութեան և հնչման հիման վրա փոխել են Ծ-ի, այդպէսով պահելով նախկին արտասանութիւնը՝ բայց գրելով ներկայումս իրանց ըմբռնման համաձայն։ Տաճկահայոց գրականութիւնը գործ է ածում այժմ ճանրայ կամ ճամբայ բառը, որ հնչվում է ճամիա, (ինչպէս և ոմանք գրում էլ են)։ Ոչինչ տարակոյս չը կայ, որ դա՝ գրաբարի ճանապարհ բառի ամփոփած ձևն է։ Արդ, եթէ Պ տառը իրանց նախնիք հընչում էին b և ոչ թէ p. ինչու այժմ նոքա նոյն հնչումը գրոշմում են այսօր այն տառով, որ իրանց լեզուի վրայ p է հնչվում և ոչ թէ b.— նոյնպէս պանիր հնչում են panir և ոչ banir.

Գրական բառ է դարձած նոյնպէս ժողովրդական ինտոր կամ ընտոր, որ գրաբարի ընդ և որ բառերի բարդութիւնն է։ Ընդոր բառի մէջ ուրեմն Դ. տառը հնչվում է եղել նախնեաց մէջ d, որ տաճկահայերը իրանց ներկայ հնչման յարմար գրոշմելու համար Դ փոխել են Տ-ի, որ արտասանում են այժմ d և ոչ t.—Այդ կարգիցն են նմանապէս ատիկա (փոխ. աղիկա), ատոնք (փոխ. աղոնք)։ Վերջին ժամանակ գրագէտ ճշդապահները սկսել են գրել ադիկա, ադոնք և այլն։ Բայց ուշադրութեան արժանի է, որ որքան մենք լսել ենք, նոքա այդ բառերը այլ ևս չեն հնչում ատիկա, ատոնք, ինչպէս պէտք էր սպասել, այլ adika, adonk, ընդհանրապէս, պահելով այդպէս նախկին արտասանութիւնը։

Մեր յօդուածի տեսողութեան մէջ յարգելի ընթերցողը տեսաւ, որ «մեր թարգմանչաց և մատենագրաց հասցէին» ուղղված ենթադրութիւնները թէ նոքա հայ ժողովրդեան մեծամասնութեան բուն սովորական հնչման հակառակ գրոշմ են տուել հայկական տառերին— ոչինչ բանաւոր հիմք չունի. տեսաւ նմանապէս թէ ինչ արժէք պէտք է տալ «Մեծամասնութիւն» բառի նշանակութեան, թէ այս վերջինն ինչպէս

Այդ պատճառով հարկաւոր եմ համարում նախ-օրոք յայտնել նահանգիս թէ հարկատու և թէ հարկ չը վճարող ամբողջ աղգաբնակութեանը, որ կոչնագրի հասակին պատկանող երիտասարդները, որոնք թէ իրանց մեղաւորութեամբ կամ ուրիշ որ և է պատճառով չեն գրված կոչնագրում, պէտք է իրանք հոգս քաշեն ճշդութեամբ իմանալու իրանց ծննդեան ժամանակը և իմաց տան իրանց մասին Թիֆլիս, Ախալցխա և Գօրի քաղաքային վարչութեանը, իսկ նահանգի մնացած քաղաքներում և աղգաբնակութիւն ունեցող կէտերում—գաւառապետին:

Ծանօթութիւն. Զինուորագրութեան կանոնագրութեան 93 յօդուածի հիման վրա, ծառայութիւն կանչելու և ընդունելու վերաբերեալ գործավարութեան համար, և այս առարկաների վերաբերմամբ մասնաւոր անձանց կառավարչական տեղերի և անձինքների հետ ամեն տեսակ յարաբերութիւններ ունենալու համար, գործ է ածվում պարզ, դրոշմային տուրքին չենթարկվող թուղթ: Փետրվարի 7-ին 1887 թվ:

Թիֆլիսի նահանգապետ գեներալ-մայոր Գ ր օ ս մ ա ն.

Զինուորագրութեան վերաբերեալ գործավարութեան կառավարիչ, առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Տ ի գ ր ա ն օ վ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25-ին փետրվարի

Անցեալ յունվար ամսին Ներսիսեան դպրոցի ուսուցչական ժողովը, շատ խոր մտածելուց յետոյ, եկել է այն եզրակացութեանը, թէ դպրոցի աշակերտաց մի մասը շատ թոյլ է և արժանի չէ լսել այն դասարանաց ուսման շրջանը, որին անցեալ տարի իրանք, ուսուցիչներն են արժանացրել: Այդ պատճառով վճռվել է «յիմարներին» ջոկել «իմաստուններից», որպէս զի առաջինները վերջիններին չը կարողանան վարակել, և կաղմել առանձին առանձին դասարաններ: Այս վճիռը իրագործելու համար փակել են առաջին, երկրորդ և երրորդ դասարանների դուռը թաց նները և դրանց փոխարէն հիմնել են ինչ որ մի տեսակ միջանկեալ բաժանմունքներ, կամ աւելի ճիշտ՝ առաջին երեք դասարանների թոյլ աշակերտներին, դատապարտելով նրանց մնալ մի և նոյն դասարանում երկու տարի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց դպրոցի նախկին տեսչի և ներկայ ուսուցիչների: Սրանով խորհուրդը իր պատուելի նախագահի հետ հասել է երկու նպատակի. 1) «իմաստուններին» ազատել է «յիմարներից» և 2) ուսուցիչներից մի քանիսին միջոց է տուել նեղութիւն չը տալ իրանց, երբ «յիմարները» չէին կարողանում հասկանալ նրանց աւանդած դասը: Գուցէ, բացի այդ երկու նպատակներից,

---

*է գոյացել և թէ ինչպէս է շարունակվում գոյանալ: Հետևաբար չէ կարելի սխալել, որ այժմեան Թիւրքիոյ հայերը՝ մեր նախնեաց մէջ գործածված տառերը՝ հէնց այդ տառերի կազմվելու ժամանակից սկսեալ, ժառանգութիւն են ստացել իրանց պապերից՝ ապստամբվել մեր դպրութեան հայրերի դրած կանոններից և այդ տառերը՝ իրանց բուն նախնական արտասանութեան ընդդիմադիր համարել: Մեր բաղմահմուտ մատենագիրներից մին՝ խօսելով մեր անկիր ժամանակի մատենագրութեան սկզբանց մասին, յայտնի վկայում է թէ այն տառերը՝ որոնք այսօր յեղաշրջել են իրանց հնչումները Թիւրքահայոց մէջ—մեր թարգմանիչները գրել են ն ա խ ն ա կ ա ն հ ն չ մ ա մ բ. քանի որ համապատասխան են այն լեզուների տառերի հետ, որոնցից փոխ են առնված այդ տառերով գրված մեր բառերը: Ի զուր են ապաստանվում ենթադրութիւնների և կարծիքների անյատակ վիհերում: Ցայտնի տեսնվում է, որ «ինչպէս ապագան՝ նոյնպէս անցեալը դեռ ներկայի մէջ կենդանի է, թ է պ է տ վ ե ր ջ ի ն չ ո ւ ն չ ո վ» որպէս շատ իրաւամբ ասում է մի և նոյն մատենագիրը *):*

Աւելորդ չենք համարում, վերջապէս և մի դիտողութիւն ևս անել, որ Թիւրքերէն լեզուի մէջ գործածված պարսկական բառերը, որոնք տաճկահայերից այժմ իրանց նոր տառադրութեան ձևով են գրվում, հին ժամանակ ընդհանրապէս հակառակ տառադրութեամբ են գրել մեր նախնիք, մեծագոյն մասամբ. (բացառութիւնները հաղուագիւտ են): Եւ այդ փոքր կարևորութիւն չունի, ըստ որում այսօր մեր լեզուի մէջ վիճում են թէ հին և թէ նոր պարսկերէն բառեր, որոնց հայացուցումը՝ մեր հին գրական լեզուի տառադրութեան համաձայն, նոյնպէս կենդանի ապացոյց է թէ մեր նախնիք թէև իւրացուցել են օտար բառեր, սակայն ոչինչ այնպիսի ձև չեն տուել նոցա, որ կարողանանք մտածել թէ նոքա չարժվել են ժողովրդեան մեծամասնութեան արտասանութեան հակառակ, քանի որ նոցա տառադրած պարսկական բառերը՝ մեծաւ մասամբ պահած են իրանց նախնական տիպը: Օրինակի համար, հին, պարսկ. դ ե վ ա (deva) և դ ո ւ զ ա խ (douzach) բառերը տառադրված են դ ե ւ և դ ժ ո խ-ը: Իսկ նոր պարսկերէնից, (bacht), (peikar), (peiman), (grav), (чиратъ) և այլն բառերը՝ թարգմանիչք տառադրել են բ ա խ տ, պ ա յ ք ա ր, պ ա յ մ ա ն, գ ր ա ւ, և ճ ր ա գ: Բայց տաճկահայոց ներկայ հնչումները մի զարմանալի տարաձայնութեան պատճառ են դառնում, այժմ: Օրինակ պարսից յայտնի bacht հնչումը նոքա արտասանում են pacht, peïman-ը արտասանում են baïman, grav արտասանում են krav և այլն, հետևաբար կամ իրանք սխալվում են ուղիղ արտասանութեան մէջ, կամ պէտք է ուղղեն նախնեաց սխալը յիշեալ պարսկական բառերը իրանց ներկայ տառադրութեան համեմատ, որ ճիշդ ընթերցման մէջ սխալ չը մտնէ: Մենք տեսանք թէ ինչ տառադրութեամբ էին գրում մեր նախնիք պարսկական բառերը: Այդ նախնական տառադրութիւնը ամենքս քայլափոխում ստիպում է տաճկահայերին երկու միմեանց հակառակ արտասանութեանց մէջ դեգերել: Օրինակի համար, տաճկական տառերով գրուած ժամանակ կարդալ ը ս տ ա խ ա կ ա ն ի ն, bacht, dracht, gavazan և հայկական տառերով գրուած ժամանակ ս խ ա լ հ ն չ մ ա մ բ pacht, tracht, kavazan կարդալ, մի և նոյն պարսիկ բառերը: Ուստի որովհետև, ըստ վկայութեան վեր. հ. Տիրոյեանի, տաճկահայերը բոլորովին անդորր սրտիւ, առանց խղճի խայթ ղղալու, կարող են այդ բ ա խ տ, դ ր ա խ տ, դ ա ւ ա ղ ա ն պարսկական բառերը այնպէս տառադրել, որ միանգամ ընդ միշտ թէ կորստվեն նախնեաց կապանքից և թէ վերջ կը դնեն այդ երկակի արտասանութեան, մենք էլ մեր կողմից շատ տ ր ա մ ա բ ա ն ա կ ա ն կը դառնանք այդ ընթացքը և կը համարձակվինք յիշեցնել հետևեալ պարսկական առածը, որ ըստ ինքեան առանց այն էլ անծանօթ չէ Կ. Պոլսոյ դպրոցական տաճկագիտաց, բայց աւելորդ չենք դատում այս առթիւ նորա կրկնումը: (Ըստ տաճկահայոց տառադրութեան՝ եէք իմրուզ խուպ պիհթէրէսթ էզտիւֆէրտա վէ հէր չի մի թիւմանի, սախթ իմրուզ պէֆէրտա մէկիւղար): Այսինքն՝ «մի այսօրը լաւագոյն է քան երկու վաղը, և ինչ որ անելու ես, այսօր արա, վաղուան մի թողնի....»

Եզրակացնելով մեր ցայս վայր ասածները՝ մենք կրկնում ենք, թէ 1) Ռուսահայոց ի կիր առած հայկական տառից հնչումն և գրութեան եղանակը մ ի ա կ ճ ի շ դ ն է: 2) Աւելի քան անհաւանական է, որ հայոց այբբենարանի կազմութեան ժամանակ թարգմանիչները հակառակ վարված լինէին ժողովրդեան մեծամասնութեան իսկական հնչման: 3) Տաճկահայոց և ռուսահայոց արտասանութեան մէջ հ ի մ ն ա կ ա ն տ ա բ բ ե ր ո ւ թ ի ւ ն ը մուտք է գտած այն ժամանակ, երբ տաճկահայերը մտան նախ թաթար կամ մնդղլ և ապա յ ա տ կ ա պ է ս թուրք լեզուի անկոսար ազդեցութեան և խիստ լծի տակ: Հրաւիրելով առ այս ձեռնհաս բանասէրների ուշադրութիւնը, մենք յարմար ենք դատում կրկնել մեր ներկայ յօդուածը՝ առաջ բերելով իւր «Բնական քերականութեան» յառաջաբանի վերջում մեր դիտնական լեզուագէտի յիշատակած խօսքերը. «Եթէ ընթերցողներուս հանդիպելու դժուարութեանցն ամէն մէկուն լուծումը չեմ տուած, դէթ վստահ կրնամ ըլլալ, որ դիրենք սխալ ճամբու մը առաջնորդած չըլլամ, որմէ հարկաւորին ետ դառնալ:»

Աւաքել Սարուխանեանց

---

*) Հ. Յով. Վ. Գ ա թ ը ր ճ ե ա ն (Վիլենայի Մխիթարեաններից). Պատմ. Մատենագր. Հայոց. Ա ն դ ի ր ժ ա մ ա ն ա կ: Մենք խորհուրդ կը տայինք մեր այն բանասէրներին, որոնք առիթ չեն ունեցել կարդալու այդ գիրքը—անպատճառ ձեռք անցնել այդ, որ նոյն իսկ եւրոպացի հայագիտաց էլ մեծ ուշադրութիւն է գրաւած:

շաբաթներով կորչում են դպրոցի ընթերցարանից և ձեռքից ձեռք են անցնում։ «Վայ մեր խմբագիրներին, աւելացնում է Թղթակիցը, եթէ հայաբնակ բոլոր քաղաքները մեր Ս. Խաչի պէս բաժնորդ տալու լինեն հայոց լրագիրներին։»

—

«Մշակի» № 15-ի ներքին լուրերի բաժնում տպված էր, որ իբրև թէ ԻԳԴԻՐԻ երկսեռ դպրոցները փակված են։ Այժմ պ. Խօջայնաթեանց մեզ գրում է թէ այդ լուրը սուտ է։ Ընդհակառակն, գրում է մեզ պարոնը, Երևանի թեմի գիւղական դպրոցների թւում Իգդիրի ուսումնարանը առաջինն է, որ պահում է հինգ ուսուցիչ և երկու վարժուհի։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Ամսոյս 12-ին կատարվեցաւ այստեղ Վարդանանց տօնը, իսկ 13-ին ուսուցիչների խումբը թատրոնական ներկայացումն տուաց։ Խաղացին «Աշչակ երկրորդ» ողբերգութիւնը. Իգդիրի պէս մի յետընկած տեղի համար ներկայացումն կարող էր շատ աջող համարվել։»

—

Մեզ գրում են որ Ն. Կոկչայեանցի Սուրմալուի գաւառից հեռանալուց յետոյ, այդտեղի գաւառապետի պաշտօնի վրա նշանակվեցաւ պ. Փիրումեան։ Նոր գաւառապետին շատ են գովում։

—

ՕԴԷՍԱՅԻ լրագիրները հաղորդում են, որ «Моск. Вѣд.» լրագրի խմբագիր պ. Կատկով հիմնելու է Օդեսայում մի քաղաքական-գրականական ամենօրեայ մեծ թերթ և մի տպարան, որոնց համար որոշված է յատկացնել մի քանի տասնեակ հազար ռուբլի։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ քաղաքում, նորերումս մի օրիորդ, գիմնազիայի 7-որդ դասատան աշակերտուհի, ինքնասպանութեան փորձ փորձեց՝ լուծված ֆոսֆոր խմելով։ Ինքնասպանութիւն գործելու պատճառը եղել է անտանելի աղքատութիւնը, որից ստիպված օրիորդը ապրում էր մի կտոր յամաք սև հացով, ապրում էր խոնաւ և մութ նկուղի մի յետ ընկած անկիւնում.... Բժիշկները յոյս չունեն նրա առողջանալու մասին։

—

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ մտադրութիւն կայ հիմնելու «Առողջապահութեան բարեկամների» մի ընկերութիւն, որի կանոնագրութիւնը շուտով ներկայացվելու է հաստատութեան համար Պետերբուրգ, ներքին գործերի մինիստրութեանը։ Ընկերութեան նպատակն է ամբոխի մէջ տարածել տեղեկութիւններ առողջապահութեան մասին՝ հասարակական դասախօսութիւններ կարդալով, բրոշիւրներ հրատարակելով, մուզէումներ հիմնելով և այլն։ Այդ մուզէումների մէջ ցոյց կը տրվին ամենականոնաւոր բնակարանների կաղապարները։ Ընկերութիւնը մտադիր է հիմնել և կայարաններ ուսնկղէնները քննելու համար։

—

Պետերբուրգի «Новости» լրագիրը հաղորդում է որ շուտով Փարիզում լոյս կը տեսնի Ֆրանսերէն լեզուով կոմս Տոլստոյի մի պրուաձք, որը ռուսերէն դեռ չէ տպված, և կրում է «Ինչ անել» («Что дѣлать») վերնագիրը։ Ֆրանսերէնը թարգմանված է ուղղակի բնագրից։

—

Յայտնի նկարիչ մարինիստ Այվազովսկի և նկարիչ—պորտրէտիստ Բէպին ներկայումս Պետերբուրգում զբաղված են մի պատկեր նկարելով, որը ներկայացնում է «Պուշկինին ծովի ափում»։ Այվազովսկի նկարում է ծովը, իսկ Բէպին նկարում է Պուշկինին։ Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ այդ պատկերը շուտով պատրաստ կը լինի։

—

«Մշակի» 21-դ համարում, բանասիրական բաժնում, առաջին երեսի, առաջին էջի երկրորդ տողում սխալմամբ տպված է «արդէն ԺԱԱ դարից», բայց պէտք է լինի «արդէն Ժ—ԺԱ դարից»։

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ցանկանալով նպաստել հայոց դպրոցների համար հմուտ ուսուցիչներ և ուսուցչուհիներ պատրաստելու գործին, վճռել է պահել թոշակաւոր որդեգիրներ՝ մէկը Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում, և երկուսը իգական գիմնազիայում։ Թոշակաւոր լինելու գլխաւոր պայմանը այն է, որ թոշակաւորը տպորած պէտք է լինի հայոց ուսումնարանում և լաւ ծանօթ հայոց լեզուին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ, ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԵՒ ՇՎԷՅՑԱՐԻԱՅՈՒՄ

—

Փետրվարի 11-ին, առաւօտեան, երկրաշարժի սաստիկ հարուածները թշուառութեան և աւերակների տարաւորութիւն մի աղեսալի տեսարան բացին Եւրոպայի կենտրոնում։ Երկրաշարժի հարուածները տարածվեցան Ֆրանսիայի հարաւ-արևելեան կողմում, Հիւսիսային Իտալիայում և մասամբ Շվէյցարիայում։ Ամենից շատ վնասվեցան Նիցցան և Միջերկրականի ծովեզերեայ շատ տեղերը։ Երկրաշարժը արտայայտվեցաւ ստորերկրեայ երեք հարուածներով։ Առաջին երկու հարուածը զգալի եղաւ առաւօտեան 6 ժամին համարեա յաջորդաբար։ Երրորդ հարուածը զգալի եղաւ մի ժամից յետոյ։ Երկրաշարժը ծանր վնասներ է տուել։ Վնասվել են այնպիսի տեղեր, որտեղ բնակութիւն են հաստատել հաղարաւոր օտարականները, բացի տեղական բնակիչներից, որոնք եկել էին կամ բժշկվելու այդ զեղեցիկ վայրերում, կամ ուրախ և անհոգ կեանք անցկացնելու։ Առաջին հարուածը մեծ վնասներ տուաց Նիցցայի տներին. բնակիչները սարսափած անկողնից դուրս վազեցին. հրապարակների վրա խմբվեցան բազմաթիւ սարսափահար եղած մարդիկ.—կանայք գիշերվայ շապիկներով, և մանր երեխաներ, համարեա մերկ։ Նիցցայի նահանգապետը, վախչել ուղեկցելով, իր բնակարանի պատուհանից վայր ցատկեց։ Քաղաքային օրիորդաց դպրոցի տեսչուհուն մեռած հանեցին դպրոցի աւերակների տակից։ Շատ տներ ճեղքվեցան։ Հրապարակների վրա վրաններ չմնվեցան խնայոն։ Կառքերը ահաղին գներով վարձով են տրվում գիշերելու համար։ Բիվիէրում, Մոնտէ-Կարլօում, Մոնակօում մեծ աւերմունքներ են եղել։ Բօրդիգերում նոյնպէս մեծ վնասներ են եղել։ Այնտեղ ապրող նշանաւոր ֆրանսիացի դիտնական Պաստեօրին ազատեցին աւերակների միջից։ Պաստեօրը դառնալով իրան ազատող զինուորներից մէկին ասեց. «Բարեկամ, այնտեղ անկիւնում դրված են իմ անդամահատական գործիքները, գնանք վիրաւորածներին օգնելու համար։» Երկրաշարժի հարուածները ազդեցին Լիոնում, Գրենոբլում, Վալանսում, Ավինիոնում, Տուլօնում, Մարսէյլում, Կաննում։

Իտալիայում, մանաւանդ Տուրինում և Ջէնուայում առաւօտեան 6 ժամ 22 րոպէին զգալի եղաւ առաջին մեծ հարուածը։ Ջէնուայում հարուածը տևեց 12 վայրկեան։ Տները ճեղքվեցան։ Հարուածի ժամանակ լսելի էր մի այնպիսի խուլ ձայն, որ կարծէք շատ հեռու տեղ թնդանօթներ են արձակում։ Սարսափահար բնակիչները դուրս թափվեցան տներից։ Ջէնուայում, քաղաքային մի թատրոնում պարահանդէս կար, երբ զգալի եղաւ առաջին հարուածը. թատրոնի մէջ եղող մի քանի հազար մարդիկ սարսափելի երկիւղի ենթարկվեցան։ Սիստրի-Պրայում և ուրիշ շատ տեղերում բնակիչները թողեցին տները։ Շատ տեղեր հեռագրական յարաբերութիւնները ընդհատվեցան։ Երկրաշարժի հարուածները զգալի եղան Ալեքսանդրիայում, Միլանում, Ֆօգդիում, Ֆօրլիում, Ակվիում, Պավիայում, Լուկկում, Տուրինում, Պարմում, Մոդենում, Լիվորնոյում և այլն։

Բայարդօ գիւղում, որ գտնվում է Սան-Բէմոյի մօտ, եկեղեցին քանդվեցաւ և աւերակների տակ մնացին 300 մարդ։ Սավոնում 8 հոգի սպանվեցան և 15 հոգի ծանր վիրաւորվեցան. Նօլիում 15 հոգի սպանված են. Դիանոմարինում շատերը սպանված են։

Շվէյցարիայից եկած լուրերին նայելով, փետրվարի 11-ին, առաւօտեան 6 ժամ 2 րոպէին, Ժընեվում և նրա կանտօնում զգալի եղան երկրաշարժի հարուածներ։ Համեմատաբար Շվէյցարիայում վնասները փոքր են։ Գիտնական քննութիւնները ցոյց են տալիս, որ այդ երկրաշարժը, ալիքաձև էր, և նրա ուղղութիւնը հիւսիս-արևելքից դէպի հարաւ էր։

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ

—

Ցիւրիխ, 24/12 փետրվարի

Ինչպէս յայտնի է ամենքին, Շվէյցարիայում տարբական ուսումը պարտադիր է և մի և նոյն ժամանակ բոլորովին ձրի. ուստի և շվէյցարացի մանուկը, մի և նոյն է թէ որ շրջանին նա պատկանէր, երբէք զրկված չէ ուսումից. նա իր նիւթական մնոյի հետ համահաւասար վայելում է նոյնպէս իր մտաւոր և հոգեկան մնունդը։ Եւ մինթէ կարող էր ուրիշ կերպ լինել, քանի որ վաղուց է արդէն, որ ուսումնարանը շվէյցարացու հոգացողութեան գլխաւոր առարկաներից մէկն է դարձել և որը նա անդադար ձգտում է բարեկարգել և կատարելագործելով ժողովրդի պահանջներին համապատասխանեցնել։

Ծնողաց աղքատութիւնը արգելք չէ լինում մանկան ուսումից զրկվելու. ուսումնարանը բացի ուսման պիտոյքներից չքաւորներին հոգում է և միւս կարիքները։

Շվէյցարացին միշտ աշխատում է ամեն դէպքում գործնականապէս վարվել և դիտէ իրան ներկայացած յարմար առթից օգտվել և իր կարօտեալ եղբօր օգնել։ Նոյնը կը տեսնէք և ուսումնարանում. ահա մօտենում են նոր տարվայ և Ս. Ծննդեան տօները. արդէն մի քանի օր առաջ ուսումնարանում (տարրական) երեխաների համար տօնածառ է պատրաստվում։ Մօտենում է վերջապէս այն երեկոն, որին մանուկները անհամբերութեամբ սպասում էին։ Ուսումնարանի դահլիճում, ուր պատրաստված է տօնածառը, երեխաների ծնողները կամ մօտիկ ազգականները իրանց համար որոշված տեղում նստել են։ Ահա կարգով գալիս են ուսումնարանի բոլոր աշակերտները և աշակերտուհիները իրանց ուսուցիչների հետ և իւրաքանչիւր դասարան բռնում է իր համար որոշված տեղը։ Այս ամենը կատարվում է այնպիսի ուշադրութեան արժանի կարգապահութեամբ, որ մարդու սիրտը հրճվում է տեսնելով երկու հարիւրից աւելի, այդ բոպէին մեծ ուրախութեամբ լցված մանուկների զուարթ դէմքերը, որոնք առանց դաստիարակների օգնութեանը կարօտելու, կանոնաւոր կերպով, առանց աղմուկի տեղաւորվում էին իրանց տեղերում, բայց չը մոռանամ յիշելու որ տեղն էլ ընդարձակ էր։ Արդէն ուսուցիչները սկսում են վառել տօնածառի վրա եղած գոյնզգոյն մոմերը, և դուք այն ժամանակ պարզ տեսնում էք, որ տօնածառի վրա փոխանակ բազմատեսակ զանազան շաքարեղէնների, ճրագների, մի քանի կարգ գոյնզգոյն զարդեր (որոնք ուրիշ անգամներում ևս կարելի է գործածել) և միայն տեղ տեղ շաքարեղէններ. ուրեմն ինչ բանը պէտք է ուրախացնէ երեխաներին, որոնք միայն անհամբերութեամբ սպասում էին այդ երեկոյին. շուտով կը տեսնենք։ Երեխայք նախ երգում են մի երգ, ապա ուսուցիչներից մէկը բարձրանում է ամբիոն և սկսում է մանուկներին մի զեղեցիկ պատմութեան միջոցով հասկացնել այդ օրվայ նշանակութիւնը։ Սրանից յետոյ երգվում են շատ երգեր։ Երգերից յետոյ իւրաքանչիւր ուսուցիչ և ուսուցչուհի սկսում է բաժանել իր աշակերտներին և աշակերտուհիներին մի մի փոքրիկ նկանակ շաքարահաց և մի զեղեցիկ պատկերազարդ գիրք ընթերցանութեան, դրա հետ միասին իւրաքանչիւր չքաւոր մանուկ ստանում է կամ մի տաք հագուստ, կամ մի զոյգ կօշիկ և միասին մի երկու զոյգ տաք գուլպայ, կամ շալ, կամ տաք ներքնազգեստ, կամ գոգնոց և այլն, նայելով իւրաքանչիւրի անհրաժեշտութեան. այսպիսով վերջանում է հանդէսը։ Գոհ սրտով մանուկները վերադառնում են տուն, տանելով իրանց հետ այն որի կարօտութիւնը իրանց զգալի էր և ծնողք անկարող էին հոգալ։

Այս տարի շվէյցարական հասարակաց օգտին ծառայող ընկերութիւնը հիմնում է Լիւցէրնում օրիորդաց համար խոհարարութեան և տընտարութեան ուսումնարան. ուսման շրջանը մի տարի է, ուսումը ձրի, միայն թէ աւարտողները պարտաւոր են ուրիշ ուսումնարաններում մի երկու տարի դործնականապէս այդ առարկաներից ձրի դաս աւանդել։ Մինչև այժմ Շվէյցարիայում այդ տեսակ ուսումնարանները համարեա բոլորն էլ մասնաւոր էին, իսկ այժմ լինքը հասարակութիւնն է դրա հիմնողը։

Վ. Ց.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փետրվարի 12-ին, Մարսէլի հայ դաղթականութիւնը վերին ասպիճանի չքեղ և փառաւոր կերպով տօնեց Վարդանանց տօնը։ Մատուռը, որտեղ հաւաքված էին երկու սեռի շատ հայեր, զարդարված էր «Վարդանի» և «Ներսէս պարիարքի» ծաղկահիւս պատկերներով։ Հանդէսը սկսվեցաւ «Տէր կիսր դու զնայս» երգով։ Սահակ քահանան մի ատենախօսութեամբ բացատրեց Վարդանանց նշանակութիւնը։ Հանդիսի կարգադիր մասնախմբի անդամ պ. Կիւլպէնկեան պատմելով Վարդանանց դործերը, ներկայացրեց Հայաստանի այժմեան դրութիւնը։ Կարդացվեցան ուրիշ շատ ճառեր և նշանաւոր ոտանաւորներ։ Հանդիսականները ցրվեցան ամենադեղեցիկ տպաւորութեան տակ։

—Տրապիզոնի հայոց առաջնորդ Գարեգին եպիսկոպոսը փետրվարի 2-ին Տրապիզոնից գնաց Օրդու, այնտեղ հայոց շրջաններում պատահած խառնակութիւնները հանդարտեցնելու համար։ Ինչպէս հաղորդում են արտասահմանի հայոց լրագիրները, սրբազանի Մուշ գնալը՝ առ այժմ յետաձգված է։

—Լոնդոնի «Quaterly Review» ամսագրի այս տարվայ համարներում տպվում են մի շարք յօդուածներ՝ «Եւրոպայի այժմեան քաղաքական դրութիւնը» վերնագրով։ Այդ յօդուածների հեղինակ համարվում է յայտնի Չարլս Դիլկ։ Այդ յօդուածները իրանց մէջ պարունակված մտքերով մեծ ուշադրութիւն են գրաւել։ Վերջին յօդուածում Չարլս Դիլկ խօսում է Ռուսաստանի պատերազմական ոյժի, Բոլգարիայի գործերի և անգլօ-ռուսական յարաբերութիւնների մասին, բացատրելով Թիւրքիայի և Հնդկաստանի նշանակութիւնը այդ յարաբերութեան մէջ։

—Իրլանդիայում կառավարութեան դէմ կատարվող ցոյցերը կրկնապատկվում են։ Քաղաքական-ազգային շարժումներին այնտեղ աւելանում է և կրօնական շարժումը. կաթոլիկ հոգևորականութիւնը ևս սկսում է թշնամութիւն արտայայտել դէպի բողոքական Անգլիան։ Ինքը իրլանդական հոգևորականութիւնը ժողովարարութիւն է անում յօդուտ հալածվող և բանտարկվող ազգասէրների։ Կաստել արքեպիսկոպոսը մի կատաղի կռիւ է սկսել կառավարութեան ճնշումների դէմ, և այն միտքն է տարածում, որ Անգլիային հարկ տալը ինքնասպանութիւն է Իրլանդիայի համար, քանի որ այդ փողերը ոչ թէ գործ են դնվում Իրլանդիայի համար, այլ այդ փողերով պահպանվում են այն ոյժերը, որոնք խեղդում են Իրլանդիայի դոյութիւնը։

—Լոնդոնի «Pale Mall Gazette» հաղորդում է, որ Գերմանիայի, Անգլիայի և Աւստրօ-Ունդարիայի մէջ դաշնակցութիւն է կապվում, որի նպատակը պէտք է լինի պահպանել Եւրոպայում այժմեան statuquo.

—Բուչչուկից հաղորդում են, որ այնտեղ մտադրութիւն կայ Սոֆյանօվին ընտրել խնամակալութեան անդամ։

—Պտրասբուրգից գրում են, որ թէ այնտեղ և թէ առհասարակ Էլդաս-Լոթարինգիայում ազգաբնակութիւնը յուզված դրութեան մէջ է։ Ֆրանսական զանազան հայրենասիրական ընկերութիւններ հրատարակում են մանիֆեստներ և պրոկլամացիաներ։ Զերբակալութիւնները անվերջանալի են. գերմանական կառավարութիւնը ըսկսել է վերին ասպիճանի խստութեամբ վերաբերվել դէպի կառավարութեան հակակրողները։

—Բերլինից հեռագրում են, որ ազգային-ազատամիտների և պահպանողականների մէջ նկատվում է տարաձայնութիւն։ Եթէ այդ տարաձայնութիւնը իրականանայ, այն ժամանակ Բիսմարկի զինուորական օրինագծին մեծ վտանգ կարող է սպառնալ։

—Իտալիայում շարունակվում է մինիստրական ճգնաժամը. Գերմանիան և Աւստրիան շատ են աշխատում, որպէս զի այնտեղ չը կազմակերպվի ընդդիմադրական մինիստրութիւն։

—«Հավասի գործակալութիւնը» հեռագրում է Պօլսից. «Ռիզա-բէյը ուղարկվեցաւ իբրև պատգամաւոր, իսկ շատերի կարծիքով, իբրև լրագրի ներկայացուցիչ։ Նրան յանձնված է բոլգարական գործերի մասին ճիշդ տեղեկութիւններ հաստնել Բ. Դրանը։ Թիւրքաց կառավարութիւնը առաջ ուզում էր այդ պաշտօնը յանձնել արտաքին գործերի մինիստրի օգնական Արթին-բէյին։ Սուլթանը չը կամենալով, որ իր մտից հեռանայ Արթին-բէյը, որը արտաքին գործերի գլխաւոր դեկավարն է համարվում, լինքը ուղարկեց Ռիզա-բէյին։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգում հիմնված է մի ընկերութիւն, որի նպատակն է «օգնել աղքատ ընտանիքներին»։ Այդ ընկերութիւնը պատրաստվում է բաց անել մի ձրի ճաշարան, յատկապէս ընտանիք ունեցող չքաւոր մարդոց համար։

* * *

Նորերումս Վիէննայում խմբագիրները և գրականագէտները առեցին մի պարահանդէս: Այդ պարահանդէսին ներկայ էր և աւստրիական թագաժառանգը, որը պարահանդէսի ժամանակ երկար խօսակցութիւններ ունեցաւ մամուլի և գրականութեան ներկայացուցիչների հետ:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը, որով Սեմիրեչինի շրջանի աղգաբնակութիւնը, սկսած 1887 թվի դիւորական կոչունքից, զինուորական ծառայութեան է հրաւիրվում: Ներքին գործերի մինիստրութիւնը յայտարարում է, որ թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ, Պալեստինա գնացող օտարերկրացի հրէաների երուսաղէմում մնալու ժամանակամիջոցը սահմանափակվում է երեսուն օրով: «Journal de St. Pétersbourg» ասում է, որ բոլգարական բռնաւորների կատարած գազանութիւնները, վերջապէս պարզ գոյնով ցոյց են տալիս կանոնաւոր դրութեան և աղատութեան այդ կեղծ պաշտպանների ինչ լինելը և, ինչպէս այդ երևում է «Հիւսիսային գործակալութեան» Կ. Պոլսի հեռագրից, ապիթ տուեցին թիւրքաց կօմիսարի միջամտութիւնը: Այդ միջամտութիւնը, եթէ չի էլ ազատի բռնութեան զոհերի կեանքը, կարող է, գէթ, վերջ տալ յետագայ գազանութիւններին, որոնց սառնասիրտ հանդիսական լինել չէ կարող կօմիսարը, առանց անպատուութիւն բերելու Բոլգարիայի վրա բարձր հեղինակութիւն ունեցող իշխանութեանը և առանց զրգռելու իշխանութեան յափշտակողներին՝ դէպի անկախութիւն, որով նոքա այդպէս ստորաբար օգտվում են: Պէտք է յուսալ, որ այդ յափշտակութիւնները այն համոզմանը կը բերեն, որ պէտք է վերջ տալ այն նահատակ—ժողովրդի տանջանքներին, որին նորերումս Ռուսաստանը իր անձնազոհութեամբ կեանք պարգևեց, և որը այժմ, Եւրոպայի չափազանց ներողամտութեան շնորհիւ, ենթարկված է անիշխանութեան, զուրկ լինելով պաշտպանութիւնից: Համբերութիւնն էլ ունի սահման, և այդ սահմանը արդէն անցել է:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 25 փետրվարի: Ռուսահպատակ կապիտան Բօլման՝ հրացանի չառնվեցաւ և եկաւ Բուխարէստ, որտեղ կը մնայ մինչև իր վէրքերի առողջանալը: Ռուսաստանը պահանջեց Պանովի և Ֆիլովի աղատութիւնը՝ սակայն երբ այդ պահանջը տեղ հասաւ, երևեցաւ, որ Պանովին արդէն հրացանի են առել: Բումինական կառավարութիւնը յետ չէ ուղարկում բոլգարական պանդխտականներին. նա միայն առաջարկեց երկու բան՝ կամ ընակութիւն հաստատել Բումինիայի հիւսիսային քաղաքներում, և կամ գնալ Ռուսաստան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Այսօր, Թագաւոր Կայսրի ծննդեան տօնի հանդիսաւոր օրվայ պատճառով մայրաքաղաքը զարդարված է դրօշակներով: Խահակեան մայր-եկեղեցում կատարվեցաւ հանդիսաւոր պատարագ, ներկայութեամբ պալատական պաշտօնեաների, զեներալների, զօրքի և նաւատորմի օֆիցէրների: Մեծ ընդունելութիւն Բարձրագոյն պալատում չը կար: Ֆելդցէյ-ադիւտանտ, գնդապետ, Մեծ Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչին շնորհված է զեներալ-մայորի աստիճան և նա նշանակված է Պրէօբրաժէնսկի գնդի հրամանատար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Զինուորական վարչութեանը յայտնված է հրամանագրով, որ Թագաւոր Կայսրը յատկապէս յայտնելով իր Ամենաողորմած ուշադրութիւնը բօտանների, էսկադրօնների կառավարիչների և հարիւրապետների անխոնջ աշխատութեան և եռանդոտ ծառայութեան համար, բարեհաճեց շնորհել նրանց, բացի եղած 366 ր. տեղանի փողերից, լրացուցիչ 300 ր. տարեկան: Մի և նոյն ժամանակ Նորին Մեծութիւնը բարեհաճեց հրամայել, որ բատալիոնների այն կառավարիչները, և չտար-օֆիցէրները, նոյնպէս և բօտանների այն կառավարիչները և հարիւրապետները, որոնք տարեկան 366 ռուբլուց աւելի են ստանում, ստանալին համեմատ այդ ռոճիկին լրացուցիչ ռոճիկ: Հրամանագրի վերջում ասված է. «Թագաւոր Կայսրը հաւատացած է որ Իր պարգևած շնորհը, որով նիւթական ապահովութիւն է տրվում բոլոր արժանաւոր օֆիցէրներին, մինչև աւագ օրէր-օֆիցէրների աստիճանների հասնելը, կը կրկնապատկի նրանց աշխատանքի եռանդը և աւելի էլ կը նպաստի Իրան հաւատարիմ և փառաւոր զօրքի առաջընթացութեան գործին»: Հրամանագրին կցված է նոր նշանակված ռոճիկների ցուցակը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Ծխախոտի մենաւաճառութեան հարցի վերաբերմամբ «Новое Время» հաղորդում է, որ զիտաւորութիւն կայ ամեն տեղ հիմնել արքունի ընդարձակ ֆաբրիկաներ և փակել մասնաւորները: Ծխախոտի մաս մաս ծախելը կը կատարվի ակցիզային տուրքերի վարչութեան կողմից նշանակված անձանց միջնորդութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 26 փետրվարի: Բէյխստագը հաղթեց մեծամասնութեամբ ընդունեց սեպտենատի մասին օրինագիծը: Օրինագծի դէմ ձայն տուին՝ աղատ-մտածողների կուսակցութիւնը, սոցիալիստները և էլզասցիներ: Լեհացիները բացակայ էին նիստից:

ՓԱՐԻԶ, 26 փետրվարի: Այստեղ ստացված է Լօնդօնից մի տեղեկութիւն, որ իբր թէ Աւստրիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև եղած բանակցութիւնների ժամանակ իբաւ հարց յարուցվեցաւ Իտալիային Ցունիսը զիջելու խնդիրը: Բայց այդ միտքը թողված է Անգլիայի կողմից ցոյց տուած ընդդիմադրութեան պատճառով, որովհետև Անգլիան այն կարծիքի է թէ Բիզերտա նաւահանգստի Իտալիային յանձնելը աւելի էլ վատանգաւոր կը լինէր Միջերկրական ծովի աղատութեան համար, քան թէ Ֆրանսիացիների ներկայութիւնը Ցունիսում:

ԻՐԲԻՏ, 27 փետրվարի: Ցօնավաճառը վերջանում է բաւարար կերպով. վճարումները ճշդութեամբ են կատարված:

ԲԵՐԼԻՆ, 27 փետրվարի: Ռուսաց Կայսրի ծննդեան օրը մեծ հանդիսով տօնեց այստեղ ռուսաց դեսպանատունը: Կէսօրին սկսեցին դեսպանատուն զալ պալատական բարձր աստիճանաւորները, դիպլոմատներ և ուրիշ բարձրաստիճան անձինք: Այսօր, նոյն այդ առիթով նշանակված է հանդիսաւոր ճաշ պալատում ուր, բացի կայսերական ընտանիքի անդամներից, հրաւիրված են ռուսաց դեսպանատան բոլոր պաշտօնեաները, շատ զեներալներ և Կայսր Ալէքսանդրի անուն կրող գվարդիայի գնդի չտաբ-օֆիցէրներ:

ՎԻԷՆՆԱ, 27 փետրվարի: Կիսապաշտօնական «Fremdenblatt» լրագիրը հերքում է աւստրիական տասն օֆիցէրների Բոլգարիա գնալը, որպէս բոլգարական զօրքի հրահանգիչներ: Մի և նոյն լրագիրը, որպէս և «Freie Presse» լրագիրը, սեպտենատին ձայն տալը խաղաղութեան էական նշան են համարում:

ՐՈՒԹՇՈՒԿ, 27 փետրվարի: Ռուսաստանի պահանջմամբ, Ֆիլովին թոյլ է տրված հեռանալ Բոլգարիայից: Զինուորական դատարանը երկկնելումն շնորհեց ազատամտութեան մասնակից զինուորներին, դատապարտելով 2 ունտէր-օֆիցէրներին հնգամեայ և հինգ ուրիշներին ցմահ բանտարկութեան:

ՎԻԷՆՆԱ, 27 փետրվարի: Կիսապաշտօնական «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց կառավարութիւնը պետութիւններին մի շրջաբերական ուղարկեց, որով առաջարկում է նրանց գործ դնել իրանց ազդեցութիւնը անդիմութիւնների առաջն առնելու համար Բոլգարիայում կուսակցութիւնների կռիվ ժամանակ: Շրջաբերականը, ըստ երևոյթին, ուղարկված է Բուչչուկում կատարված սպանութիւններից յետոյ, և նախ քան այդ շրջաբերականը կը հասնէր, դատապարտեալները արդէն մահվան պատժի ենթարկվեցան:

ԼՕՆԴՕՆ, 27 փետրվարի: Անգլիական բանկը իջեցրեց դիսկօնտը 4-ից մինչև $3^1/_2$%:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 27 փետրվարի: «Հավասի գործակալութիւնը» հերքում է այն լուրը, որ իբր թէ ժուրժէվոում պատրաստ էր նաւը ռուսաց դեսպան Խիտրովոին Բոլգարիա հասցնելու համար, եթէ ապստամբութիւնը աջող վախճան ունենար:

ՓԱՐԻԶ, 27 փետրվարի: Պատգամաւորների ժողովը որոշեց 5 ֆրանկի քանակութեամբ մաքսահարկ դնել հայի վրա: Բէլգիայում, մէլենիտի բաղադրութիւն ունեցող ռումբերով թնդանօթները լցնելու ժամանակ, հրաղէնքները պատռվեցան, որի ժամանակ 8 փամփշտագործներ սպանվեցան, իսկ 3 հողի ծանր կերպով վիրաւորվեցան:

ԼՕՆԴՕՆ, 27 փետրվարի: Համայնքների ժողովին ներկայացրած ծովային բիւդժէտից երևում է, որ մի տարվայ ընթացքում անգլիական նաւատորմին կաւելանան 10 նոր զրահակիրներ, 7 կրէյսերներ, 3 ականակիր նաւակներ և 5 ուրիշ նաւեր: Ֆէրդիւսոն յայտնեց, որ ռուսաց զօրքերի Սէրասխի մօտ կենտրոնանալու լուրերը ուղիղ չեն:

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի: Խնամակալութիւնը առաջարկում է նոր դիջումներ բոլգարական խնդրի լուծումը հեշտացնելու նպատակով:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ քաղաքում ՕՐ. ՄԱՐԻԱՄ ՏԷՐ-ՄԱՐՈՒԳԵԱՆՑ ընդունում է ձեռագործութեան աշակերտուհիներ: Սովորեցնում է. կար, ձև, ուլունքով գործուածքներ, կանվայի կար, ամենայն տեսակ ծաղիկներ շինել և այլն:
Յանկացողները կարող են դիմել օրիորդին: 1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, 5-ին մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒԷՆ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պորտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԿՀԱՐԴԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻ: 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ ՐԻՅԻԽ, վերադարձած լինելով ճանապարհորդութիւնից, ընդունում է ԱԶՔԻՒ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ամեն առաւօտ իր բնակարանում, Ստարօարսէնալնայա փողոց, տուն № 17. 3—4

28—100
ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց):
Ստացված է՝ Մալց-էկստրակտ և հաղի համար կոնֆեկտներ՝ «Մի հաղիր»: Զկան իւղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրովանսի ձէթ, քացախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԹԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՆԴԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՑ, լեղակ՝ փոշիով և գունտերով. բծեր հանելու դեղեր, կօշկաներկ և վէռնիճ կօշիկների համար. սամավարը և առհասարակ մետալեայ գործիքները սրբելու իւղ և փոշի: ՇՎԵԴԱԿԱՆ ԳՐԵՖՍԲԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԿԻ, և անտեսութեան ուրիշ պարագաներ: Լէնզիլի թխտենու բալղամը. թխտենու կրէմ. Էմուլսիա և Էնգլոնտի կոսմետիական սրբիչներ, երեսի և մարմնոյ թարմութիւնը պահպանելու համար: Կիսունէնի էլէօպատ մազերը պնդացնելու համար:
Դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում:

Մարտի 1-ի վիճակահանութեան համար
ԵՂԲԱՐՑ ԾՕՎԻԱՆՕՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՄԵՆԵԱԿԸ
(Սիօնի փողոց, քարվանսարայ Անանօվի)
ՎԱՃԱՌՈՒՄ Է խաղատոմակներ II փոխառութեան և փոխ է տալիս նոցա գրաւականով
210 ՐՈՒԲԼԻ:
ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է 50 կօպ. Հատը: 10 տոմակից աւելին 45 ԿՕՊ. ՀԱՏԸ. 20 տոմակից աւելին 40 ԿՕՊ. ՀԱՏԸ: 7—8

ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելութեան փվելուց: Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Բալզամ—Eugénie. դաստակ և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, չուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօսմետիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր: Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց մէջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պօմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս Գուտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը: 86—100

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻԶՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 շրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում: 19—30

Дозволено цензурою, Тифлисъ 27 Февраля 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.